

Ահա այսպես: Ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք:<sup>1</sup>

Ա. Պեշկո

Մ. Գորկու նամակում առկա է կյանքի կենսահաստատ փիլիսոփայությունը. կյանքից պետք է կարողանալ ամեն բան վերցնել եւ ամեն բան տալ կյանքին, մարդկանց:

Նա խոսում է գրականության բազմաբղետության, հոգեկան լայնածավալ տարողության մասին՝ պետք աղմկել, ապրել, հայհոյել, խնդալ, սիրել, եւ, իհարկե, չի մոռանում եիշեցնել, որ ամեն մի գրող գրականության մեծ երգչախմբում պետք է ունենա իր ձայնը եւ չպետք է մոռանա, որ գրականությունը մարդկային կյանքի արձագանքն է:

Վերադառնալով Մ. Գորկու նամակը՝ ուղղված Տիգրան Հախումյանին, կամենում ենք 70 տարի անց այս հոդվածի բանասիրական ֆակուլտետներում սովորող բոլոր սկսնակ գրողներին, նրանց մատնացույց անելով դեպի մեծ գրականություն տանող ման այս շավիղը, որն անցնելով, համոզված ենք, ավելի հաստատ կբայլեն:

## ДОЛУХАНИЯ АЭЛИТА – ПИСЬМО М. ГОРЬКОГО К ТИГРАНУ АХУМЯНУ.

В 1916 году М. Горький направил письмо к молодому, тогда еще, поэту Тиграну Ахумяну. Это письмо можно было направить вообще всем начинающим писателям, так как в нем есть правдивое описание творческого процесса и намечена важнейшая взаимосвязь жизни и творчества. Письмо Горького в этом аспекте нестареющее и от нее можно многому научиться.

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ  
ՏԱՐԱՐԺԵՔ  
ՔԱՆՈՒՆԻ  
ԱՅՏԱՏՐԱԿԱՆ  
ԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

## ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Հայ բառարանագրությունը հարուստ ժառանգություն է ստեղծել. կազմվել են ամենաբազմազան բառարաններ՝ ներլեզվային եւ միջլեզվային ուղղություններով (բացատրական, բարձրագույնական, արմատական, լեզվաբանական, հոգեբանական, գրականագիտական, դարձվածաբանական, հոմանիշների, համանունների, երաժշտական, ռազմական եւ այլն):

Մակայն բառարանագրական այս նվաճումները գրեթե վերաբերում են ժամանակակից հայերենին՝ նրա արդի բառային կազմին. անտեսվում է գրաբարը:

Եթե նկատի ունենանք, որ գրաբարի բառարանագրական հուշարձանները՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (Խ. Ա. Բ., Վենետիկ, 1836-37) եւ «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1865), լույս են տեսել մեզանից շուրջ մեկ եւ կես դար առաջ, ապա ցավով պետք է ասել, որ գրաբարի բառային կազմի բնության շրջանցումն ստեղծել է մի անջրպետ հայ բառարանագրության ներսում: Այսօր հրապարակի վրա չկան գրաբարի հոմանիշների, հակառակների, համանունների, բառակազմական, կապակցության (բառակապակցական) եւ այլ կարգի բառարաններ: Մանավանդ, առայսօր չունենք գրաբար-աշխարհաբար (արեւելահայերեն) բացատրական բառարան<sup>1</sup>:

Ուրախալի է, որ մեզանում գրաբար-աշխարհաբար բառարանագրական այդ անջրպետը փոքրիշատե կարճելու փորձ է կատարել բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Խաչատրյանը: Նա վերջերս լույս ընծայեց «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան» աշխատանքը<sup>2</sup>:

Լ. Խաչատրյանը երկու մենագրություն է նվիրել այդ հարցերի լուսարանությանը հայերենի ազատ եւ կայուն կապակցությունների հարթությունների վրա՝ «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (Երևան, 1985) եւ «Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում» (Երևան, 1996):

Լ. Խաչատրյանի ներկա բառարանն ընդգրկում է հին հայերեն մասնագրության մեջ գործածված շուրջ չորս հազար բառ, որոնք բառաբանական իմաստով ու արժեքով երկատված են եւ կազմում են լեզվի ձևաբանորեն տարարժեք բառերի շերտը:

Հայտնի է, որ տարարժեքությունը կարող է արտահայտվել ման միեւնոյն բառույթի շրջանակներում՝ ի հայտ բերելով ներխոսքիմասային ձևաբանական տարարժեքություն: Հեղինակը, սակայն, բառարանում զետեղել է ձևաբանորեն տարարժեք այն բառերը, որոնց երկատված բառաբանական իմաստներն ու արժեքներն ընդգրկվում են տարբեր խոսքի մասերի միջև՝ ի հայտ բերելով միջխոսքիմասային տարարժեքություն:

Այդպիսի բառերը գրաբարում համոզեա են գալիս երկարժեք եւ եռարժեք համատեղումներով:

Գրախոսվող բառարանում ըստ ամենայնի բացատրված են այդ կարգի բառերը:

<sup>1</sup> ՆՀԲ-ն գրաբարի բառային կազմը բացատրում է գրաբարով, իսկ ԱԲ-ն՝ արեւմտահայերենով ու բոլորքերենով:

<sup>2</sup> Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1998, 160 էջ:

<sup>1</sup> Պահպանում ենք 1928 թվականին հրապարակված նամակի ուղղագրությունն ու կետադրությունը:

Այսպես, հետևյալ բառերը համատեղում են խոսքիմասային երկու նշանակություններ. **Ասագ**-ած. մեծա-  
պատիվ, երեւելի, գ. իշխան, պետ: **Ձինակիր**-ած. զինք կրող. զինավառ, գ. թիկնապահ, արքայական. ծառա:  
**Ձուր**-ած. ունայն, սին, անպատու, մկ. իզուր տեղը, անտեղի: **Քարթրաչայն**-ած. բարձրագույն, հնչեղ, մկ. հաղթա-  
կանորեն: **Արդարայ**-մխղր. դուրս, առանց, մկ. արտաբուստ, հեռու: **Բայց** - 2. սակայն, այլ, իսկ, մխղր. բացի, ա-  
ռանց:

Հետևյալ բառերը համատեղում են խոսքիմասային երեք նշանակություններ. **Անուր**-գ. բերդ, աշտարակ,  
ամրոց, ած. հաստատ, պինդ, պիրկ, ապահով, մկ. սաստկորեն: **Հեռի**-ած. հեռու, երկար, հին, մկ. ուշ. մաս չունե-  
նալով, մխղր. առանց, բացի: **Մինչ/մինչեւ** - մխղր. մինչեւ, մկ. տակավին, դեռ, 2. երբ որ, այնպես որ: **Արդ** - մկ.  
այժմ, ի մոտ, ած. արդի, այժմվա, 2. ուրեմն, այնուհետեւ: Եվ այլն:

Հեղինակն այս բառարանը կազմելիս փորձել է հաղթահարել գրաբարի նշանավոր բառարաններում  
խնդրա առարկայի վերաբերյալ եղած տարակարծությունները. նկատի է ունեցել նաեւ ՆՀԲ-ի լրամշակված  
տարբերակը, որ աշխատասիրել է Նորայր Բյուզանդացին<sup>3</sup>:

Այնուհետեւ նա իր ձեռքի տակ եղած բառացանկը ստուգել է հին հայերեն մատենագրության համաբար-  
բառների տվյալներով եւ տեքստի շրջանակներում որոշել դրանց բառաքերականական արժեքների երկատվա-  
ծության աստիճանը:

Մեր կարծիքով հեղինակը ճիշտ է վարվել, երբ բառարանում չի գետեղել այն բառերը, որոնք եզակի գոր-  
ծածություն ունեն եւ պատկանում են լեզվի բարբառային (ռամկական) շերտին, ինչպես՝ *անբաղարար, դարակո-  
նատ, գոշարաղ, կաղակարծ, ճեղանակ* եւ այլն, կամ էլ այն բառերը, որոնց իմաստաարժեքային հակադրությու-  
նը հասնում է համանունության (բուսանուններ, կենդանականների անվանումներ եւ այլն), կամ էլ թվական-  
ներն ու դերանունները, որոնք գրաբարի բառարաններում դիտվում են իբրեւ տարարժեք միավորներ:

Հեղինակը ճիշտ է կիրառել բառարանագրության մեջ ընդունված սկզբունքները՝ ապահովելով բառահոդ-  
վածի իմաստային բացատրության մատչելիության եղանակ:

Բառարանում տարարժեք բառի յուրաքանչյուր արժեքի համար տրված է առանձին բացատրություն, ինչ-  
պես՝ *անդադար*- ած. անհանգիստ, դադար չունեցող, մկ. հանապազ, շարունակ, միշտ:

Եթե տարարժեք բառերի իմաստային կառուցվածքում երկատված արժեքները հստակ տարբերակված  
չեն, դրանց համար տրվում է մեկ բացատրություն, ինչպես՝ *ապենակալ*- ած./գ. դատավոր, խորհրդական, դպիր:

Հաճախ գոյականական արժեքի տարբերակումը կատարվում է լրացուցիչ բառերի օգնությամբ (մարդ,  
անձ եւ այլն), ինչպես՝ *մաճկալ*- ած./գ. հերկող՝ վարող՝ մաճ բռնող (մարդ):

Եթե տվյալ բառի երկատված արժեքներից մեկը բառական նշանակությամբ բազմիմաստ է, ապա այդ ի-  
մասունները տրվում են առանձին, ինչպես՝ *գուշակ* - գ./ած. մարգարեացող, ճշմարիտ կամ կեղծ բաներ գուշակող,  
չար լուր բերող, գ. օրինակ, նշան:

Որպեսզի խոսքիմասային տարարժեքության իրողությունը մատչելի լինի նաեւ ոչ մասնագետներին, հե-  
ղինակը բառարանին կցել է ընդարձակ առաջաբան, որտեղ ընկած է այդ երեսույթը *մասնակի* (շարահյուսա-  
կան) եւ *լիակապար* (ձեռքարանական) առումներով: Նա լեզվական այդ իրողությունը ներկայացնում է գրաբարի  
շրջանակներում՝ տարբերակելով *համաժամանակյա* տարարժեք բառերը (որոնք ստատիկ ձեռով առկա են 5-րդ  
դարում) *դարաժամանակյա* տարարժեք բառերից (որոնք ձեռավորվել են գրաբարի ենթափուլերում՝ 5-12-րդ  
դարերում):

Մույն բառարանը, ինչպես վկայում է հեղինակը, ներկայացնում է գրաբարի ձեռքարանորեն տարարժեք  
բառերի այն շրջանակը, որի սահմաններում կարելի է զբաղվել դրանց իմաստաարժեքային փոփոխությունների  
հետազոտությամբ ու երեսույթի գիտական նկարագրությամբ:

Ենչուեղով այս բառարանի գործնական արժեքը գրաբար տեքստերի թարգմանության ընթացքում, ցան-  
կալի է, որ այն գիտական հետազոտությունների համար որոշակի աղբյուրի դեր կատարի: Դրա համար հարկ է,  
որ հեղինակն աշխատի այն լրամշակելու ուղղությամբ եւ տարարժեք բառերի երկատված յուրաքանչյուր իմաս-  
տի համար վկայի համապատասխան բնագրային օրինակներ:

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

<sup>3</sup> Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Սրբագրումը եւ ճշգրտումը Նորայր Բիւզանդացու ձեռքով: Հրատարակութեան պատ-  
րաստեց Մ.Մինասեանը, Ժնև, 1990:

## ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ-ՏԵՂԵԿԱՏՈՒ. ՄԻԱՍԻՆ, ԱՆՋԱՏ ԿԱՄ ԳԾԻԿՈՎ ԳՐՎՈՂ ԲԱՌԵՐ

Հարուստ պատմություն ունի հայ բառարանագրությունը: Բառարաններ ստեղծվել են մեր մատենագրութ-  
յան սկզբնավորմանը գրեթե զուգահեռ: Ծիշտ է, դրանք նախապես մեծ մասամբ բառացանկեր էին, սակայն, այ-  
նուամենայնիվ, դրեցին այն կարևոր սկիզբը, որից հետո դարերի ընթացքում գրվեցին նորանոր եւ տարբեր տե-  
սակի բառարաններ՝ միալեզվյան, թարգմանական, հանրագիտարանային, մասնագիտական, ուղղագրական եւ  
այլն: Դրանց պատկը, հարկավ, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային աշխատությունն է:

Բառարանագրությունը հատկապես մեծ թափ ստացավ մեր դարի քսանական թվականներից՝ խորհրդա-  
յին իշխանության տարիներին: Ամերցելի բառարանների կողքին (Հր.Աճառյան «Հայերեն արմատական բառա-  
րան», Մա. Մալխասյան «Հայերեն բացատրական բառարան», «Հայկական հանրագիտարան» եւ այլն)  
ստեղծվեցին բազմալիսի մեծ ու փոքր բառարաններ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակը, հասցեա-  
ստերը (թե՛ ու՛մ է ուղղված), այս կամ այն խնդիրն է լուծում՝ այդպիսով լրացնելով մեր բառարանագրության մի  
բացը:

Այս անսակեւից առանձնանում են հայերենի ուղղագրական բառարանները: Երկու տասնամյակից ավե-  
լի է, ինչ հրապարակի վրա է Հովհ.Բարսեղյանի մեծածավալ «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմի-  
նաբանական բառարանը», աշակերտության համար՝ Ար. Ղաթիբյանի «Դպրոցական ուղղագրական բառարա-  
նը»: Վերջին տարիներին դրանց ավելացան նորերը՝ Հ.Հարությունյանի, Ռ.Իշխանյանի եւ այլոց կազմած  
բառգրքայիններն ու բառացանկերը:

Թվում է, թե անելու մոտ բան այլևս չկա, կամ էլ մոգերը սոսկ կրկնելու են մախրողներին, թերևս՝  
փոքր-ինչ լրացնելու:

Բոլորովին վերջերս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Դավիթ Գյուրջինյանի  
«Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր» գիրքը, որն իր աեսակի մեջ ա-  
ռաջինն է մեզանում:

Բառարան-տեղեկատու հետաքրքրական կառուցվածք ունի: Այն բաղկացած է բացատրական բաժնից,  
որտեղ հեղինակն անդրադառնում է հայոց լեզվի ուղղագրության բավական վիճահարույց հարցերից մեկին՝ բա-  
ռերի բաղադրիչների միասին, անջատ կամ գծիկով գրությանը: Դ. Գյուրջինյանը տեսական նյութը յուրօրինակ  
եղանակով է ներկայացնում. մշակել է հինգ տասնյակից ավելի մուշտօրինակ-կաղապարներ, որոնց միջոցով էլ  
հակիրճ ներկայացնում է մույն կանոնին վերաբերող բառերի (երբեմն էլ բառակապակցությունների) գրությունը:  
Օրինակ՝ բաղադրիչների կրկնությամբ կազմված տարատեսակ բառերը ներկայացվել են հետևյալ կաղապար-  
ներով՝ ա) կաթիլ-կաթիլ, պարապ-սարապ, ճեփ-ճեփմակ, բ) սերնդեսերունդ, գ) թե՛ թե՛լի, բաղաքից բաղաք, դ)  
ինքնըստինքյան, տարեցտարի, ե) հեկիհեկ, բացիքբաց, զ) բառ առ բառ եւ այլն: Նկատելի է մուշտօրինակների  
դասավորության խիստ տրամաբանականությունը, դրանց դիպուկ ընտրությունը: Տեղեկատուի այս բաժինը էա-  
պես բարձրացնում է գրքուկի օգտակարության գործակիցը՝ նրան հաղորդելով ուսումնամեթոդական ուղղվա-  
ծություն: Այս առումով հարկ է նշել, որ սույն աշխատանքը կարող է օգտակար լինել թե՛ դպրոցականին, թե՛ ու-  
սանողին, թե՛ հայերենի ուսուցչին, ինչպես նաեւ լրագրողներին եւ հայ գրողներին առհասարակ:

Բացատրական բաժնին հաջորդում է բառացանկը, որն ընդգրկում է շուրջ 3500 բառ եւ բառարանային  
միավոր: Դրանք հավաքվել են հայերենի տարբեր բառարաններից, այնպես էլ գեղարվեստական եւ գիտական  
գրականությունից, մամուլից: Նշված աղբյուրներում նկատվում է բազմաթիվ բառերի գրության անմիօրինա-  
կություն, զուգաձեռությունների առկայություն, ինչու չէ, նաեւ սխալ գրություններ:

Բառերի գրության սկզբունքները հեղինակը մշակել է Տերմինաբանական կոմիտեի 1976թ. «Գծիկի գոր-  
ծածության մասին» որոշման (նախագիծը՝ ակադ. Ս. Աբրահամյանի) դրույթների հիման վրա: Հարկ եղած դեպ-  
քում, իհարկե, արվում են լրացումներ, ճշգրտումներ, բառարանային գրանցում են ստացել բազմաթիվ մոտ բա-  
ռեր: Միօրինակության հասնելու ձգտումն է պատճառը, որ հեղինակը խուսափել է շատ ու շատ բառերի զուգա-  
ձեռություններից:

Բառացանկի միավորներն ընտրված են ամենայն բժախնդրությամբ: Դրանք հիմնականում համագործա-  
ժական բառեր են, կան նաեւ ժողովրդական, բարբառային կազմություններ, մասնագիտական եզրույթներ, ինչ-  
պես նաեւ նորամուտ փոփոխություններ:

Առանձին ցանկով տրվում են այն հատուկ անունները, որոնց գծիկով, միասին կամ անջատ գրությունը ո-  
րոշակի դժվարություն է հարուցում, կամ էլ զգալի խայտաբղետություն ունենք:

Գրախոսվող բառարան-տեղեկատուի առկայությունն անշուշտ կնպաստի հայոց լեզվի ուղղագրության  
այս դժվար խնդրի լուծման արդյունավետ տարբերակներ գտնելու գործին: Այն կարևոր ուղեցույցի դեր կարող է  
կատարել: Իհարկե, հեղինակն առաջաբանում նշում է, որ այն «պարտադրող կամ կաշկանդող դերի չի հավակ-  
նում»:

Կարծում ենք, որ Դ.Գյուրջինյանի բառարան-տեղեկատուն ուրիշ հրատարակություն էլ պիտի ունենա:  
Ինչու՞: Նախ՝ անկասկած կլինեն լրացումներ (ինչպես՝ բերել-զցել, խանութ-տաղավար եւ այլն), երկրորդ՝ կարե-  
լի է հրաժարվել նաեւ որոշ զուգադրություններից (ինչպես՝ վարքուբարք- վարք աւ բարք, խաղուպար- խաղ ու  
պար) եւ շարունակել կանոնարկման գործընթացը:



Իբրեւ այս բնագավառի առաջին փորձ, Դավիթ Գյուրջինյանի «Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ զծիկով գրվող բառեր» գիրքն իսկապես հնադրված եւ խիստ անհրաժեշտ մի աշխատանք է՝ օգտակար մայրենի լեզվի ուսուցման դպրոցական եւ բուհական համակարգերում:

L. ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՈՐ ԳԻՐԲ

Պատվական Խաչատրյան, Հայոց լեզվի եւ գրականության ուսուցման արդի խնդիրներ, 1997, Ե., «Հայաստան» հրատարակչություն

Գիրքը հասցեագրված է ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետի ուսանողներին եւ առհասարակ նրանց, ովքեր հետաքրքրվում են մեթոդական հարցերով:

Գրքում քննություն են առնված հայոց լեզվի եւ գրականության ուսուցմանը վերաբերող մի քանի կարեւոր խնդիրներ՝ բանավոր խոսքի զարգացում, տնային հանձնարարություն, դասատուիպեր, լեզվառական գործնական առաջադրանքներ եւ այլն:

Բանավոր խոսքի զարգացման ուղիները քննելիս՝ հեղինակը իրավացիորեն նկատում է, որ դպրոցի շրջանավարտներից շատերը չեն կարողանում մտքերն ազատ ու անկաշկանդ արտահայտել, դրսևորում են բառապաշարի աղքատություն, խոսում են բարբառով կամ խառն լեզվով եւ այլն: Այդ թերությունները հաճախ հարաձեւվում են՝ ուղեկցելով նրանց՝ ողջ ընթացքում: Այս թերությունների հիմնական պատճառը անբավարար ուսուցումն է: Հենց սկզբից չի վերլուծվում ու ճշտվում աշակերտների բանավոր խոսքը, աստիճանաբար չի հարստացվում հայերենի արտահայտչական ճոխ հնարավորություններով, եւ արդյունքում սխալները հարատևում են ու կայունանում:

Այս խնդրում ուսուցիչներին օգնելու նպատակով հեղինակը կիրառել է մեթոդական մի շարք արդյունավետ ձևեր ու եղանակներ: Նա ներկայացրել է բանավոր խոսքի խելամիտ վերլուծության, սխալների ուղղման, բառապաշարի հարստացման, նպատակալից բանավոր վարժությունների, լեզվի ու գրականության միջառարկայական կապերի մի այնպիսի մեթոդական համակարգ, որի արդյունավետությունը անժխտելի է:

Այնուհետեւ գրքում հանգամանորեն քննության է առնվում Հայոց լեզվի եւ գրականության տնային հանձնարարությունների խնդիրը: Հեղինակը գտնում է, որ դասարանական աշխատանքի շարունակությունը հանդիսացող այդ կարեւոր բնագավառը դուրս է մնացել մեթոդիկայի տեսադաշտից: Փաստորեն չեն մշակված հանձնարարության այնպիսի չափանիշներ, որոնք ուղենիշ դառնային ուսուցիչների աշխատանքների համար:

Այդ խնդրում որեւէ մոտեցում չեն դրսևորում նաեւ դպրոցների մանկավարժական խորհուրդները եւ կրթության վերադասները: Մինչդեռ հայտնի է, որ օրվա ընթացքում աշակերտները 4-5 առարկա են անցնում, եւ յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է որքան հնարավոր է մեծ ծավալի տնային աշխատանք հանձնարարել՝ հաճախ նույնիսկ չբացատրելով, թե՛ ինչը ինչպես պետք է կատարել: Եվ ահա աշակերտները վերադառնում են տուն եւ մոլորվում հանձնարարությունների բեռն տակ: Ահա թե ինչու որոշակի կարգ ու կանոն ստեղծելու նպատակով հեղինակը ներկայացրել է տնային աշխատանքի հանձնարարման նոր սկզբունքներ (հասկանալիությունը, մատչելիությունը, նպատակայնությունը եւ ծավալը), որոնց անթերի կիրառման դեպքում աշակերտները դժվարության չեն հանդիպի:

Գրքում քննվող մյուս հարցը վերաբերում է հայոց լեզվի ուսուցման դասավանդման: Դիտարկելից ելնելով՝ հեղինակը նկատում է, որ ուսուցիչների մեծ մասը հիմնականում օգտվում է խառը (համակցված) դասագրքի հնարավորություններից՝ անուշադրության մատնելով ուսուցման համար նույնքան կարեւոր մյուս տեսակները: Հեղինակը որոշ ճշգրտումներով հանդերձ ներկայացնում է բոլոր դասատեսակները եւ դրանց կիրառման ձևերն ու նպատակները՝ միաժամանակ առաջադրելով իր նկատած երեք նոր դասատեսակները (բանավեճի, հին նյութի հարցման ու գրավոր աշխատանքի վերլուծության), որոնք կարող են շահավետ լինել լեզվական երևույթների ու ուղղագրական օրինաչափությունների գիտակցական յուրացման, ինչպես նաեւ աշակերտների ինքնուրույնության եւ ստեղծագործական նախաձեռնության զարգացման գործում:

Գրքում որոշակի տեղ է տրվել երկի լեզվառական զծերը տարբերակելու գործնական առաջադրանքներին: Դրանք հնչյունախաղեր են ու բառախաղեր, բառերին եւ դրանց իմաստներին վերաբերող խաղ-մրցույթներ, հանելուկային հարցադրումներ, սրբագրական, խմբագրական, փոխադրական ու շարադրական պոռթկնաաիկ խնդիրներ, որոնք իրենց պարունակած անհայտներով ոչ միայն կհետաքրքրեն աշակերտներին ու կմղեն որոնողական ինքնուրույն աշխատանքի, այլեւ կնպաստեն նրանց ճանաչողական սահմանների ընդլայնմանը, բառապաշարի հարստացմանը, գրավոր խոսքի կատարելագործմանը, մանավանդ տրամաբանական մտածողության զարգացմանը:

Վերջում ասենք, որ Պ. Խաչատրյանի այս նոր գիրքը տեսական ու գործնական որոշակի արժեք ունի եւ, բնականաբար, կարող է նպաստել ուսուցիչների մեթոդական մակարդակի, հետեւաբար նաեւ Հայոց լեզվի ու գրականության ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ՍՈՒՍԱՆԱ ՇԱԲԱՐՅԱՆ

### Ս. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ» (Երեւան «Նաիրի», 1998)

Հայերենագիտության մեջ վերջին տարիներին մեծացել է ուշադրությունը իմաստաբանության տարբեր հարցերի նկատմամբ: Հետազոտական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հատկապես գունանունները, որոնց համակողմանի քննությանն է նվիրված Երեւանի պետական համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սուսաննա Գրիգորյանի «Հայերենի գունանունները եւ նրանց լեզվառական արժեքը» մենագրությունը: Գունանունների իմաստային խումբը լեզվաբանությունից գալիս կարող է ուսումնասիրվել նաեւ ուրիշ գիտությունների կողմից (ազգագրություն, գրականագիտություն, հոգեբանություն, մշակութաբանություն եւ այլն): Այս տեսանկյունից դիտարկելիս հարկ է նշել, որ մեզանում հայերենի գունանուններն առաջին անգամ են հետազոտվում իբրեւ առանձին ներամփոփ իմաստային հարացույց՝ բառակազմական եւ իմաստային օրինաչափություններով եւ առանձնահատկություններով:

Գունանուններն առանձնացվում են հետեւյալ կերպ՝ ա) տարբերակված (ածական) գունանուններ՝ *կապույտ, կարմիր* եւ այլն, բ) չտարբերակված (գոյական) գունանուններ՝ *գույն, երանգ* եւ այլն, գ) փոխաբերությամբ գույն արտահայտող բառեր՝ *չյուն, սաք* եւ այլն: Հեղինակը, հենվելով գերազանցապես Հր. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Լ. Մարաջեւայի եւ այլոց ստուգաբանությունների վրա, գրքի առաջին գլխում ներկայացնում է հայերենի արմատական գունանունների ստուգաբանությունը: Երկրորդ գլուխը, որն առավել ծավալուն է, բաղկացած է մի քանի ենթաբաժիններից: Այստեղ քննության են առնվում արմատական գունանունների բառակազմական արժեքը, հայերենի բաղադրյալ գունանունների կառուցվածքային տիպերը: Առանձին ներկայացվում են գունանուն բաղադրիչ ունեցող դարձվածքները:

Աշխատության երրորդ գլխում քննվում է հայերենի գունանունների իմաստային դաշտը: Հեղինակը տարբերակում է գունանունների ենթադաշտը, բացահայտում նրա միավորների իմաստային հարաբերություններն ու ռճական արժեքը: Գունանունների ռճական-գեղագիտական արժեքը դրսևորվում է գունային մակդիրների եւ փոխաբերությունների մեջ: Լեզվաբանական աշխատությունը գրավիչ է դառնում հայ գեղարվեստական գրականությունից (հատկապես քնարերգությունից) քաղված համապատասխան նմուշների շնորհիվ: Պարզաբանվում է, որ Նարեկացու, Մեծարենցի, Սիամանթոյի, Զարենցի, Մանյանի եւ ուրիշ հեղինակների պատկերային համակարգում գունանունները հաճախ դառնում են բանաստեղծական խորհրդանիշներ:

Գրախոսվող աշխատության կարեւոր արժանիքներից է նյութի մատուցման բավական հետաքրքրական եւ մատչելի եղանակը. հետազոտությունն ավելի ամբողջական է դառնում շուրջ երեք տասնյակ գծապատկերների եւ աղյուսակների միջոցով:

Ուսումնասիրությունն ամբողջական կլիներ, եթե ընդգրկվեր նաեւ բարբառային հարուստ նյութը: Չենք կարծում, թե ճշմարիտ է հեղինակի այն տեսակետը, որ բարբառներում գործածվող գունանունները գրական լեզվի բառերի հնչյունական տարբերակներ են: Ավելորդ չենք համարում նշել, որ տեղ-տեղ ուղղակի անհրաժեշտ են այլալեզու գուգահեռները, օրինակ՝ գունանուն բաղադրիչ ունեցող դարձվածքները քննելիս:

Կարծում ենք, որ Ս. Գրիգորյանի այս հաջողված աշխատանքին պիտի հաջորդեն ուրիշները՝ ամբողջացնելով եւ լիակատար դարձնելով հետաքրքրական այս թեմայի գիտական ուսումնասիրությունը:

Դ. ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ